

ւեայ ցեղէն: Փողի ձայնը աւետեց օրհնութեան պահը, և անմիջապէս զօրախուժքը բարեկի կեցաւ, և ա՜նա բազմութիւնը ծնրազիր կ'ողջուէր օրհնութեամբ, որուն յաջորդեցին խանդավառ «կեցցէ՛ճներ Ս. Հաղորդութեան:

Անկարագրելի հանդէսը վերջ գտաւ բուն իսկ տաճարին մէջ, ուր՝ յետ զոհաբանական երգին՝ տրուեցաւ երրորդ օրհնութիւնը:

ԻՄԲ.

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆԷ

ՀԻՆ, ԲՆԱԳԻՐ ՄԸ

Էգիպտոսի Kan El Kebirի գերեզմանին պեղումներուն ժամանակ՝ հողէ ամանի մէջ գտնուեր են խնամքով լաթի մէջ ծրարուած պապիրոսներ, որոնք կը բովանդակեն Ս. Յովհաննու Աւետարանին մէկ մանեանին դպօր թարգմանութիւնը: Սոյն բնագիրը իր սկզբնական վիճակին մէջ ունեցած է հարիւր թերթեր. այժմ անկից լոկ երեք քառորդը կը մնայ: Կը համարուի որ 400ի գործ ըլլայ այդ: Յարգի վկայաթուղթս այժմ Լոնտրայի մէջ հանրութեան ի ցոյց դրուած է:

ԱՏՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԻՆԸ

Ջութակով նուագելի սոնատի մը մէկ քառիջեան ձեռագիրը՝ որ Պեդրոֆին ձեռքով գրուած է՝ հասարակաց ծախու հանուած պահուն 60,000 Քրանցի անհատաւի գոյն բարձրացաւ: Այս քարձը թիւին պատճառը՝ ձեռագրին ստորագրուած ըլլալն է, վասն զի ան միակն է որ Երածշտին ստորագրութիւնը կը կրէ: Պեդրոֆէն իր կենդանութեան օրով եօթը երևելի կտորներ ծախեց տպագրողի մը, որոնցմէ մին որ սինֆոնիա մ'էր՝ 1000 Քրանք արժեց:

ՀԵՌԱՅՈՍՆ ՈՒ ՄԻՔՐՈՊԵՆԵՐԸ

Այն տաղանայեղօրէն կայանած գործը հետագայ մարդկութիւնս ունի միգրացիոն մասին՝ չէր կրնար երկարատեւ փոխկառն թողուլ հետախօսք ստողջբաններու առջև:

Եւ ստուգիւ անզդիական թղթատարութեան վարչութիւնը հանդարտեցնելու համար հասարակաց ըմբռնողութիւնները՝ որ յայտնուի սկսած էին՝ հրամայեց կարգ մը լուրջ փորձեր ընել, զիտնալու համար թէ արդօք հեռախօսական գործիքները միջնորդ են՝ մասնաւորապէս շնչառական գործարաններու՝ փոխադրական հիւանդութեանց տարածուելուն: Ճազարներու և հնդիկ խնկորներու վրայ կատարուած փորձերը, ինչպէս նաև մանրէբաններու խնամոտ քննութիւնները հասարակաց հեռախօսներու վրայ՝ բացարձակապէս ժխտական արդիւնք տուին: Այն առեւն մի և նոյն կենդանիներուն վրայ պատուաստի փորձեր եղան այն հեղուկով՝ որ յառաջ եկած է փոխադրական հիւանդութեանց քանի մը բուժարաններուն պատկանող հեռախօսներուն լուսցուքէն, պայմանաւ որ անոնք մի միայն հիւանդներէն գործածուած ըլլան: Սակայն նոյն իսկ այս պարագային մէջ յայտնի եղաւ, որ գործիքները ոչ մէկ Պասակարութիւն չունին: Փորձերը կատարուեցան այնպիսի մանրէբանի մը կողմէ՝ որուն լրջութեան վրայ կարելի չէ տարակոյսի ոչ մէջ ստուեր գտնել:

ՀԵՁ ԱՌԻՒՄԸ

Ամերիկացի ուսուցչապետ մը ուզեց ուսումնասիրել այն տպաւորութիւնը՝ զոր սաւառնակի ճամբորդութիւն մը կրնար յառաջ բերել կատաղի զազաններուն վրայ:

Ուստի փակարանի մը մէջ դրաւ տասն ամսուան առիւծ մը և զայն իր իշտողին հետ միասին զետեղեց նաւուն կեդրոնը: Սաւառնուօք պահուն առիւծը ցոյց տուաւ սաստիկ տգոհութեան նշաններ, ստէպ պարապութեան մէջ զանվիժելու փորձեր ընելով: Սակայն քիչ քիչ հանդարտեցաւ վերջը, գոհանալով իր տհաճութիւնս յայտնել շարունակական մոնիթինգներով:

Յոյժ տարօրինակ էր՝ երբ սաւառնակը զետին փոխէր, առիւծը գառնուկի մը պէս հեզ դարձր էր:



1923 թ. Դեկտեմբեր 10-ին
ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊՏԱՆԻ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ